

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

22 հունիսի 2005 թվականի

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ՝ խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, խորհրդի նախագահի տեղակալ
- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ՝ խորհրդի քարտուղար
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Յու. Շուքրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Ռ. Աթոյան - «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Է. Մանուկյան - «ԻՄՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

- Հ. Խաչատրյան - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ

|                |                                                                                                                              |
|----------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Խ. Արևշատյան   | - «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն    |
| Լ. Գալստյան    | - «Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամի տնօրեն                                                                                  |
| Մ. Մարկոսյան   | - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ                                                                          |
| Ս. Մանուկյան   | - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն                                                                                                        |
| Հ. Մուսայելյան | - «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն                                                                              |
| Ա. Քալանթարյան | - «Ալկատել Թրեյդ Ինտերնեյշնլ ԷլՋի» ներկայացուցչության տնօրեն                                                                 |
| Հ. Խանջյան     | - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ                                                                                                    |
| Ռ. Աղզաշյան    | - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր                                                                     |
| Ա. Ալեքսանյան  | - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն                                                                         |
| Ա. Բալդրյան    | - «Յունիքոմֆ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն                                                                                           |
| Գ. Նիկողոսյան  | - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ                                                  |
| Ս. Խանազադյան  | - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ                                     |
| Պ. Դեմիրճյան   | - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ                      |
| Լ. Դոյդոյան    | - «AM» ամսագրի գլխավոր խմբագիր                                                                                               |
| Ա. Սարգսյան    | - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ |
| Ա. Մկրտչյան    | - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ |

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

*Ա. Գրիգորյան  
Տ. Դավթյան*

Յու. Շուքուրյան  
Գ. Չուգասզյան

2. 2005 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության ծրագրի ներկայացում

Ա. Գրիգորյան

3. «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի կողմից մշակված հայերեն-անգլերեն թարգմանչական ծրագրի քննարկման մասին

Է. Մանուկյան

#### 4. Այլ հարցեր

Մինչ օրակարգի հարցերի քննարկումը՝ ՀՀ Վարչապետը ներածական խոսքում խորհրդին ներկայացրեց.

ա) Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդում ռոտացիոն կարգով ընդգրկվող ներկայացուցիչների ցուցակում Հայաստանի Հանրապետության Նախագահի 2005 թվականի ապրիլի 30-ի ՆՀ-80-Ն հրամանագրի համաձայն ընդգրկված նոր ներկայացուցիչներին՝

բ) ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին՝ «տեղեկացնելով» որ որպես տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով ՀՀ վարչապետի խորհրդական նա համակարգելու է տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի աշխատանքները՝ այդ թվում՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծման աշխատանքները՝ միջազգային և դոմոր կազմակերպությունների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում իրականացվող ծրագրերը, ինպես նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության և աշխատանքային խմբերի աշխատանքները:

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի  
նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----  
(Ա. Գրիգորյան՝ Ս. Դավթյան, Բ. Ենգիբարյան, Յու. Շուքուրյան, Ա. Քուչուկյան,  
Գ. Չուգասզյան, Հ. Մուսայելյան, Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Ս. Դավթյանի, ՀՀ գիտությունների ազգային ակա-

դեմիայի փոխպրեզիդենտ, խորհրդի գիտակրթական հարցերով աշխատանքային խմբի ղեկավար Յու. Շուքուրյանի և «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ, խորհրդի դոնոր և միջազգային կազմակերպությունների կոորդինացման աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասզյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը խորհրդի նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

2. ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանին, ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) ապահովել 2005 թվականի նոյեմբերի 16-ից 18-ը Թունիսում կայանալիք Տեղեկատվական հասարակության հարցերով համաշխարհային վեհաժողովի (WSIS) երկրորդ փուլին Հայաստանի Հանրապետության մասնակցության համար ՀՀ արտաքին գործերի նախարարության և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կողմից իրականացվող գործողությունների փոխհամաձայնեցված իրականացումը:

բ) 2005 թվականի նոյեմբերի 16-ից 18-ը Թունիսում կայանալիք Տեղեկատվական հասարակության հարցերով համաշխարհային վեհաժողովի (WSIS) երկրորդ փուլին մասնակցության համար Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկել ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վ. Ներսիսյանցին, ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանին, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գ. Չուգասզյանին:

2. 2005 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության ծրագրի ներկայացում

-----  
(Ա. Գրիգորյան՝ Հ. Մուսայելյան, Ա. Ավետիսյան, Հ. Խանջյան, Հ. Խաչատրյան,  
Գ. Չուգասզյան, Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

3. Հավանություն տալ 2005 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործունեության ծրագրին:

4. ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) քննարկման ժամանակ արված առաջարկությունների հիման վրա 10-օրյա ժամկետում խմբագրել 2005 թվականի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գործնության ծրագիրը և այն ներկայացնել խորհրդի անդամներին:

բ) Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստի հաստատմանը ներկայացնել խորհրդի նոր՝ էլեկտրոնային ուսուցում աշխատանքային խմբի կազմը և գործառնությունները:

### 3. «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի կողմից մշակված հայերեն-անգլերեն թարգմանչական ծրագրի քննարկման մասին

-----  
(Է. Մանուկյան, Հ. Խանջյան, Ա. Գրիգորյան« Ա. Մարգարյան)

5. ՀՀ վարչապետի խորհրդական Ա.Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի կողմից մշակված հայերեն-անգլերեն թարգմանչական ծրագրին աջակցություն ցուցաբերելու նպատակով ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ծրագրային փաթեթներից հնարավոր միջոցներ ներգրավելու հարցը և ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն:

6. ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանին՝ ուսումնասիրել «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի կողմից մշակված հայերեն-անգլերեն թարգմանչական ծրագրի ներդրման» կատարելագործման և շահագործման աշխատանքները մասնագետներով ապահովելու նպատակով «Արհեստական բանականության համակարգեր և կիրառական լինգվիստիկա» մասնագիտությամբ մագիստրական ուսուցում նախատեսելու հարցը և մեկամսյա ժամկետում ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն:

### 4. Այլ հարցեր

Էլեկտրոնային բովանդակության համահայկական «Մաշտոց 1600» մրցույթի  
արդյունքների մասին

-----  
(Ա. Գրիգորյան« Գ. Չուգասզյան, Յու. Շուքուրյան, Բ. Ենգիբարյան,  
Հ. Խաչատրյան, Ա. Մարգարյան)

7. Գոհունակություն հայտնել «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպությանը՝ Մաշտոցյան գրերի գյուտի 1600 ամյակին նվիրված էլեկտրոնային բովանդակության համահայկական «Մաշտոց 1600» մրցույթը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Խորհրդի նախագահ,

ՀՀ վարչապետ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

Մարգարյան

Խորհրդի քարտուղար

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան